Կրթաթոշակներ արվեստագետների համար
Գործուղումներ բուհերի դասախոսների համար

Նպատակը

- Կիրառական արվեստ, դիզայն, կինոարվեստ, երաժշտություն և ճարտարապետություն դասավանդող դասախոսները կարող են դիմել գերմանական որևէ հաստատությունում ստեղծագործական համագործակցություն իրականացնելու համար տրվող կրթաթոշակներին:

Տևողությունը

- Կախված գերմանիայում իրականացվելիք (պլանավորված) ծրագրից՝ կրթաթոշակ կարող է տրամադրվել մեկից երեք ամսով: Կրթաթոշակային ծրագիրը կարող է սկսվել 2013թ. հունիսի 1-ից ոչ շուտ:

Կրթաթոշակային վճարումներ

- Կրթաթոշակ, որի չափը կախված կլինի դիմորդի ակադեմիական աստիճանից, ասիստենտների համար՝ 2000 եվրո, երիտասարդ դոցենտների և պրոֆեսորների համար՝ 2150 եվրո, բացառիկ դեպքերում՝ նաև 2300 եվրո:
- Ճանապարհածախս

Դիմելու համար անհրաժեշտ պայմանները

- Դիմորդները պետք է իրենց հայրենիքում պարտադիր դասավանդեն որևէ բուհում:
- Ընտրության համար կարևոր չափանիշ է Գերմանիայում իրականացվելիք աշխատանքի համոզիչ և հիմնավոր նկարագրությունը:
- Փաստաթղթերին պետք է կցված լինի գերմանացի աշխատակցի կամ հյուրընկալ բուհի գրավոր հրավերը:
- DAAD¬ի աշխատանքային գործուղման համար կրթաթոշակ կարող է տրամադրվել միայն երեք տարին մեկ անգամ:
- Գերմաներեն կամ անգլերեն լեզվի լավ իմացություն ըստ աշխատանքային լեզվի

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել 4 օրինակից՝ մեկ բնօրինակ և երեք պատճեն:

- Դիմումի ձև լուսանկարով (4 լուսանկար)
- Կենսագրություն
- Գիտահետազոտական նպատակի շարադրանք
- Գիտական հրապարակումների ցանկ
- Գերմանիայում գտնվելու ժամանակացույց և տեղացույց
- Գերմանացի գործընկերոջ հրավեր« որտեղ հստակորեն արտահայտված է համագործակցելու և աշխատելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պատրաստակամությունը:
- Դիպլոմի կամ գիտական աստիճանի շնորհագրի պատճեն՝ թարգմանությամբ:

Դիմումների ընդունումը մինչև սույն թվականի հոկտեմբերի 31-ը:

DAAD տեղեկատվական կենտրոն

Սարմենի 82, 0019 Երևան * Հեռ./Ֆաքս՝ +37410/ 58 25 15 * E-Mail: info@daad.am